ԿԱՆԱՉԱՊԱՏՈՒՄ ԵՎ ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՊԱՀՊԱՆՈՒԹՅՈՒՆ» ՀՈԱԿ-Ի ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՊՈՄՊԵՐԻ, ՇԱՐԺԻՉՆԵՐԻ և ՆՐԱՆՑ ՀԱՐԱԿԻՑ ՄԱՍԵՐԻ ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

N ԿՇՄՊ-ԳՀԱՊՁԲ-21/13

ք. Երևան

«24» Դեկտեմբեր 2021 թ.

«Կանաչապատում և շրջակա միջավայրի պահպանություն» ՀՈԱԿ-ը, ի դեմս տնօրեն Ա. Աղայանի, որը գործում է Կազմակերպության կանոնադրության հիման վրա, այսուհետ «Գնորդ», մի կողմից, և Էլիտպրոմ ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Ա. Նիկոյանի, որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա, այսուհետ «Վաճառող» մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1. Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով (այսուհետ՝ պայմանագիր) սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով նախատեսված ապրանքը (այսուհետ՝ ապրանք), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Գնորդն իրավունք ունի՝

2.1.1 Ապրանքը պայմանագրով սահմանված ժամկետում Վաճառողի կողմից չմատակարարելու դեպքում հրաժարվել ապրանքից, եթե մատակարարման ժամկետները խախտվել են 10 օրից ավելի:

2.1.2 Եթե հանձնվել է անպատշաճ որակի՝ պայմանագրով նախատեսված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք՝

ա) պահանջել հատուցելու ապրանքի անպատշաճ որակի լինելու պատճառով իր կատարած ծախսերը.

բ) չընդունել ապրանքն՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ապրանքը պայմանագրին համապատասխանող որակի ապրանքով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.3 կետով նախատեսված տուգանքը.

գ) հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ապրանքի համար վճարված գումարը:

2.1.3 Եթե հանձնվել է պայմանագրով որոշվածից պակաս քանակի ապրանք, ապա՝

ա) պահանջել լրացնելու ապրանքի պակաս հանձնված քանակը,

բ) հրաժարվել հանձնված ապրանքից և դրա համար վճարելուց, իսկ եթե ապրանքի համար վճարվել է, ապա պահանջել վերադարձնելու վճարված գումարը և վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.4 Եթե հանձնվել է տեսակի պայմանի խախտմամբ ապրանք, իր ընտրությամբ՝

ա) ընդունել տեսակի վերաբերյալ պայմանին համապատասխանող ապրանքը և հրաժարվել մնացած ապրանքներից.

բ) հրաժարվել հանձնված բոլոր ապրանքներից և պահանջել վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը.

գ) պահանջել տեսակի վերաբերյալ պայմանին չհամապատասխանող ապրանքի անհատույց փոխարինում պայմանագրով նախատեսված տեսակին համապատասխան ապրանքով:

2.1.5 Վաճառողի կողմից մատակարարման ժամկետների խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել ապրանքի մատակարարման նոր ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.6 Վաճառողից պահանջել հատուցելու վնասները, եթե Գնորդը Վաճառողի կողմից պարտավորությունը խախտելու հետևանքով պայմանագրի լուծումից հետո ողջամիտ ժամկետում այլ անձից ավելի բարձր, սակայն ողջամիտ գնով գնել է ապրանք՝ պայմանագրով նախատեսվածի փոխարեն՝ պայմանագրով սահմանված և դրա փոխարեն կնքված գործարքի գների միջև տարբերության չափով, ինչպես նաև ապրանքն այլ անձից ձեռք բերելու համար իր կատարած բոլոր անհրաժեշտ և ողջամիտ ծախսերը:

2.1.7 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը.

2.1.7.1 Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում.

բ) ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 10 օրից ավելի,

2.1.8 Զննել ապրանքը և հայտնաբերված թերությունների մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

2.2 Գնորդը պարտավոր է՝

2.2.1 Կատարել պայմանագրին համապատասխան մատակարարված ապրանքի ընդունումն ապահովող բոլոր անհրաժեշտ գործողությունները:

2.2.2 Վաճառողի հանձնած ապրանքից պայմանագրին համապատասխան հրաժարվելու դեպքում, ապահովել այդ ապրանքի պատասխանատու պահպանությունը և դրա մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

2.2.3 Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված ապրանքն ընդունելու դեպքում Վաճառողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ վճարման ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

2.2.4 Ապրանքի քանակի, տեսականու, որակի մասին պայմանագրի պայմանները խախտելու մասին Վաճառողին ծանուցել թերությունը հայտնաբերելուց հետո անմիջապես կամ այն բանից հետո՝ ողջամիտ ժամկետում, երբ պայմանագրի համապատասխան պայմանի խախտումը պետք է հայտնաբերված լիներ՝ ելնելով ապրանքի բնույթից և նշանակությունից:

2.2.5 Պայմանագրի 2.3.3 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Վաճառողին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2.3 Վաճառողն իրավունք ունի՝

2.3.1 Գնորդից պահանջել ընդունելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված ապրանքը:

2.3.2 Գնորդից պահանջել վճարելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված և Գնորդի կողմից ընդունված ապրանքի համար իրեն վճարման ենթակա գումարները:

2.3.3 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Գնորդն էականորեն խախտել է պայմանագիրը:

2.3.3.1 Գնորդի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե բազմիցս խախտվել են ապրանքի համար վճարելու ժամկետները:

2.3.4 Գնորդի համաձայնությամբ վաղաժամկետ մատակարարել ապրանքը:

2.4 Վաճառողը պարտավոր է՝

2.4.1 Գնորդին հանձնել ապրանքը՝ պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով:

2.4.2 Ապահովել ապրանքի մատակարարումը պայմանագրի 2.1.2 կետի բ) ենթակետին և (կամ) 2.1.5 կետին համապատասխան՝ Գնորդի կողմից սահմանված ժամկետներում:

2.4.3 Գնորդին հանձնել երրորդ անձանց իրավունքներից ազատ ապրանք:

2.4.4 Գնորդին հանձնել պայմանագրով նախատեսված որակի և քանակի ապրանք՝ պայմանագրով նախատեսված ժամկետներում և հասցեով, իսկ Գնորդի պահանջով տրամադրել ապրանքի որակը հավաստող՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված փաստաթղթեր:

2.4.5 Թերի մատակարարում թույլ տալու դեպքում, պայմանագրով նախատեսված կարգով, լրացնել թերի մատակարարվածը:

2.4.6 Հետ տանել Գնորդի կողմից պայմանագրի 2.2.2 կետին համապատասխան՝ պատասխանատու պահպանության ընդունված ապրանքը կամ ողջամիտ ժամկետում տնօրինել այն, ինչպես նաև հատուցել ապրանքը պատասխանատու պահպանության ընդունելու, այն իրացնելու կամ Վաճառողին վերադարձնելու հետ կապված անհրաժեշտ ծախսերը:

2.4.7 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.8 Գնորդին հանձնել ապրանքի պատկանելիքները և համապատասխան փաստաթղթերը:

2.4.9 Պայմանագրի 2.1.7 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Գնորդին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2.4.10 Որակավորման և պայմանագրի ապահովում ներկայացրած անձը պարտավոր է ապահովումների գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Գնորդին:

3. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ ԵՎ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 ***Պայմանագրի գինը կազմում է 35760000/երեսունհինգ միլիոն յոթ հարյուր վաթսուն հազար/ ՀՀ դրամ:*** Պայմանագրի գինը ներառում է պայմանագրի կատարումն ապահովելու նպատակով Վաճառողի կողմից կատարվելիք բոլոր վճարները (ծախսերը), այդ թվում՝ հարկերը, տուրքերը, փոխադրման, ապահովագրման ծախսերը, պարգևավճարները և ակնկալվող շահույթը:

Ապրանքի մատակարարման գինը կայուն է և Վաճառողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Գնորդը նվազեցնելու այդ գինը:

3.2 Գնորդն իրեն մատակարարված ապրանքի դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Վաճառողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով

(հավելված N 2) նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 30-ը:

4. ԱՊՐԱՆՔԻ ՈՐԱԿԸ ԵՎ ԵՐԱՇԽԻՔԸ

4.1 Վաճառողը երաշխավորում է մատակարարված ապրանքի որակի համապատասխանությունը պետական ստանդարտի պահանջներին:

4.2 Հիմնական միջոց հանդիսացող ապրանքների համար երաշխիքային ժամկետ է սահմանվում Գնորդի կողմից ապրանքն ընդունվելու օրվան հաջորդող օրվանից հաշված 365 օրացուցային օրը: Եթե երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են եկել մատակարարված ապրանքի թերություններ, ապա Վաճառողը պարտավոր է իր հաշվին, Գնորդի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները:

5. ԱՊՐԱՆՔԻ ՀԱՆՁՆՈՒՄԸ ԵՎ ԸՆԴՈՒՆՈՒՄԸ

5.1 Մատակարարված ապրանքն ընդունվում է Գնորդի և Վաճառողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսվում է Գնորդի և Վաճառողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ապրանքի մատակարարման համար նախատեսված օրը ներառյալ Վաճառողը Գնորդին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 2.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 2): Ընդ որում Վաճառողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

5.2 Եթե մատակարարված ապրանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Գնորդը պայմանագրի 5.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 10 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

5.3 Եթե մատակարարված ապրանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Գնորդը չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 5.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Վաճառողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Գնորդը ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Վաճառողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

5.4 Եթե պայմանագրի 5.2 կետով սահմանված ժամկետում Գնորդը չի ընդունում մատակարարված ապրանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատակարարված ապրանքը համարվում է ընդունված և պայմանագրի 5.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Գնորդը էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Վաճառողը պատասխանատվություն է կրում հանձնած ապրանքի որակի և պայմանագրով նախատեսված մատակարարման ժամկետների պահպանման համար:

6.2 Վաճառողի կողմից պայմանագրով նախատեսված ապրանքի մատակարարման ժամկետների խախտման դեպքում Վաճառողից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ մատակարարման ենթակա, սակայն չմատակարարված ապրանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.3 Պայմանագրի 1.1 կետում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք մատակարարելու յուրաքանչյուր դեպքում Վաճառողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի գնի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով: Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև ապրանքի մատակարարումը սույն պայմանագրով սահմանված ժամկետում կատարելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

6.4 Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Վաճառողին վճարման ենթակա գումարների հետ:

6.5 Գնորդի կողմից պայմանագրի 3.3 կետով նախատեսված ժամկետի խախտման համար Գնորդի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտվորությունները լրիվ կատարելուց:

7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի՝ պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

8.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ պայմանագիրը կնքելու նպատակով կազմակերպված գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Վաճառողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Գնորդը միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Գնորդը չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Վաճառողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Գնորդի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

8.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ապրանքի ծավալների կամ ձեռք բերվող ապրանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8.6 Ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Վաճառողի առաջարկության առկայության դեպքում, պայմանով, որ Գնորդի մոտ չի վերացել ապրանքի օգտագործման պահանջը, իսկ Վաճառողի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե մատակարարման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 5 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

8.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Վաճառող կամ Գնորդ) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Վաճառողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված

հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Վաճառողը:

8.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.9 Վաճառողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Գնորդը հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Վաճառողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Գնորդը այն ուղարկվում է նաև Վաճառողի էլեկտրոնային փոստին:

8.10 Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.11 Պայմանագիրը կազմված է ____ էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Պայմանագրի N 1, N 2, և N 2.1 հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.12 Պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

8.13 Պայմանագրով նախատեսված ապրանքների մատակարարումն իրականացվում է այդ նպատակով ֆինանսական միջոցների առկայության և դրա հիման վրա կողմերի միջև համապատասխան համաձայնագրի կնքման միջոցով: Պայմանագիրը լուծվում է, եթե այն կնքելու օրվան հաջորդող վեց ամսվա ընթացքում այդ նպատակով պայմանագրի կատարման համար ֆինանսական միջոցներ չեն նախատեսվում: Եթե պայմանագրի կատարման համար հատկացված ֆինանսական միջոցների չափը գերազանցում է գնումների բազային միավորի քսանհինգապատիկը, ապա Գնորդի կողմից համաձայնագիր կկնքվի, եթե Վաճառողի կողմից տուժանքի ձևով ներկայացված որակավորման և պայմանագրի ապահովումները՝ նախատեսված ֆինանսական միջոցների չափով, փոխարինվում է երաշխիքով կամ կանխիկ փողով՝ հաշվի առնելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշման N 1 հավելվածի 32-րդ կետի 17-րդ ենթակետի «բ» պարբերության պահանջները: Ընդ որում, Վաճառողը համաձայնագիրը կնքում, իսկ տուժանքի ձևով ներկայացված որակավորման և պայմանագրի ապահովումների փոխարինման դեպքում նաև նոր ապահովները Գնորդին ներկայացնում է համաձայնագիր կնքելու ծանուցումը ստանալու օրվանից տասնհինգ աշխատանքային օրվա ընթացքում: Հակառակ դեպքում պայմանագիրը Գնորդի կողմից միակողմանիորեն լուծվում է:

9. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ԳՆՈՐԴ	ՎԱՃԱՌՈՂ
_Կանաչապատում և շրջակա միջավայրի պահպանություն» ՀՈԱԿ	«ԷԼԻՏՊՐՈՄ» ՍՊԸ
ՀՀ, ք. Երևան, Փ.Բյուզանդի 1/3,	ՀՀ ք.Երևան, Աթոյան 111/1
Երևանի քաղաքապետարանի 2-րդ մասնաշենք	Բանկ՝ «Հայէկոնոմբանկ» ԲԲԸ
Բանկ՝ «Ինեկոբանկ» ՓԲԸ	Էրեբունու մ/ճ
Հ/Հ՝ 205022563241001	ՀՀ 163068070784
ՀՎՀՀ՝ 02819226	ՀՎՀՀ 00464022
Էլ. Հասցե՝ gnumner.kanach@yerevan.am	Էլ. Հասցե՝ elitprom1@mail.ru
Տնօրեն՝	Տնօրեն՝
Ա.Աղայան	Ա.Նիկոյան
/ստորագրություն/Կ.Տ	/ստորագրություն/Կ.Տ

Հավելված N 1
«24» նոյեմբեր 2021 թ. կնքված
ԿՇՄՊ-ԳՀԱՊՁԲ-21/13 ծածկագրով պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Ապրանքի									մատակարարման		
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	ապրանքային նշանը, մակիշը և արտադրողի անվանումը	տեխնիկական բնութագիրը*	չափման միավորը	միավոր գինը/ՀՀ դրամ	ընդհանուր գինը/ՀՀ դրամ	ընդհանուր քանակը	հասցեն	ենթակա քանակը	Ժամկետը***
1	42121150/1	Պոմպ և շաժիչ կոմպլեկտ տակդիրով		Մետաղական,ներծծման առավելագույն բարձրություն-5մետր, Հիդրավլիկ մատուցում-Q-50մ3/ժ, H-բարձրություն՝ նվազագույնը-50մ, Պտույտների հաճախականություն՝ նվազագույնը-2900պտ/ր, Շարժիչի հզորություն-15ԿՎտ: Թույլատրելի կավիտացիան-4.5 Պոմպի վալի ծանրաբեռնվածությունը հզորությունով 11Կվտ	հատ	387500	1550000	4	ք/ Երևան, Շիրազի 4		Ֆինանսական միջոցներ նախատեսվելուց հետո կողմերի միջև կնքված Համաձայնագիրն ուժի մեջ մտնելուց սկսած 20 օրացուցային օրվա ընթացքում

2	42121150/2	Պոմպ և շաժիչ կոմպլեկտ տակդիրով		Մետաղական,Ներծծման առավելագույն բարձրություն-5մետր, Հիդրավլիկ մատուցում-Q-290մ3/ժ, H-բարձրություն՝ նվազագույնը-30մ, Պտույտների հաճախականություն՝ նվազագույնը-1500պտ/ր, Շարժիչի հզորություն-37ԿՎտ: Թույլատրելի կավիտացիան-4.5	հատ	1125000	4500000	4	ք/ Երևան, Շիրազի 4		Ֆինանսական միջոցներ նախատեսվելուց հետո կողմերի միջև կնքված Համաձայնագիրն ուժի մեջ մտնելուց սկսած 20 օրացուցային օրվա ընթացքում
3	42121150/3	Պոմպ և շաժիչ կոմպլեկտ տակդիրով(ԿՄ)		Մետաղական,Ներծծման առավելագույն բարձրություն-5մետր, Հիդրավլիկ մատուցում-Q-50մ3/ժ, H-բարձրություն՝ նվազագույնը-50մ, Պտույտների հաճախականություն՝ նվազագույնը-3000պտ/ր, Շարժիչի հզորություն-15ԿՎտ: Թույլատրելի կավիտացիան-4.5	հատ	387500	1550000	4	ք/ Երևան, Շիրազի 4		Ֆինանսական միջոցներ նախատեսվելուց հետո կողմերի միջև կնքված Համաձայնագիրն ուժի մեջ մտնելուց սկսած 20 օրացուցային օրվա ընթացքում
4	42121570/1	Ներծծման կափարիչ		8K12 պոմպի ներծծման կափարիչ, թուջե, Մուտքի տրամագիծ-200մմ	հատ	85000	170000	2	ք/ Երևան, Շիրազի 4		Ֆինանսական միջոցներ նախատեսվելուց հետո կողմերի միջև կնքված Համաձայնագիրն ուժի մեջ մտնելուց սկսած 20 օրացուցային օրվա ընթացքում

5	4212570/2	Թուջե խխունջ		8k12 պոմպի խխունջ (ուլիտկա,պարուրաձև) ելքի տրամագիծ - 150մմ	հատ	110000	220000	2	ք/ Երևան, Շիրազի 4		Ֆինանսական միջոցներ նախատեսվելուց հետո կողմերի միջև կնքված Համաձայնագիրն ուժի մեջ մտնլուց սկսած 20 օրացուցային օրվա ընթացքում
6	42121570/3	Սնամեջ գլանի տակդիրի տափօղակ		8k12 պոմպի սնամեջ գլանի (վտուլկի) տակի երկաթե տափօղա	հատ	8000	40000	5	ք/ Երևան, Շիրազի 4		Ֆինանսական միջոցներ նախատեսվելուց հետո կողմերի միջև կնքված Համաձայնագիրն ուժի մեջ մտնլուց սկսած 20 օրացուցային օրվա ընթացքում
7	42121570/4	Թափանիվ		Թուջե թափանիվ 315մմ, 8k12 պոմպի	հատ	150000	750000	5	ք/ Երևան, Շիրազի 4		Ֆինանսական միջոցներ նախատեսվելուց հետո կողմերի միջև կնքված Համաձայնագիրն ուժի մեջ մտնլուց սկսած 20 օրացուցային օրվա ընթացքում
8	42121570/5	Մանեկ		Թուջե մանեկ 8k12 պոմպի,ձախ պարուրակով	հատ	16000	160000	10	ք/ Երևան, Շիրազի 4		Ֆինանսական միջոցներ նախատեսվելուց հետո կողմերի միջև կնքված Համաձայնագիրն ուժի մեջ մտնլուց սկսած 20 օրացուցային օրվա ընթացքում

9	42121570/6	Յուղոտ պարան		8k12 պոմպի սալնիկի նաբիֆկայի յուղոտ պարան 14մ	հատ	5000	50000	10	ք/ Երևան, Շիրազի 4		Ֆինանսական միջոցներ նախատեսվելուց հետո կողմերի միջև կնքված Համաձայնագիրն ուժի մեջ մտնլուց սկսած 20 օրացուցային օրվա ընթացքում
10	42121570/7	Սնամեջ գլան (վտուլկի)		Չուգունե սնամեջ գլան 8k12 պոմպի	հատ	25000	125000	5	ք/ Երևան, Շիրազի 4		Ֆինանսական միջոցներ նախատեսվելուց հետո կողմերի միջև կնքված Համաձայնագիրն ուժի մեջ մտնլուց սկսած 20 օրացուցային օրվա ընթացքում
11	42121570/8	Սալնիկի կոամբուքս		8k12 պոմպի սալնիկի թուջե կոամբուքս	հատ	13000	65000	5	ք/ Երևան, Շիրազի 4		Ֆինանսական միջոցներ նախատեսվելուց հետո կողմերի միջև կնքված Համաձայնագիրն ուժի մեջ մտնլուց սկսած 20 օրացուցային օրվա ընթացքում
12	42121570/9	Վալ		8k12 պոմպի մետաղական վալ, 40խա.	հատ	45000	135000	3	ք/ Երևան, Շիրազի 4		Ֆինանսական միջոցներ նախատեսվելուց հետո կողմերի միջև կնքված Համաձայնագիրն ուժի մեջ մտնլուց սկսած 20 օրացուցային օրվա ընթացքում

13	42121570/10	Կոանշտեյն		8k12 պոմպի թուջե կոանշտեյն	հատ	100000	200000	2	ք/ Երևան, Շիրազի 4		Ֆինանսական միջոցներ նախատեսվելուց հետո կողմերի միջև կնքված Համաձայնագիրն ուժի մեջ մտնլուց սկսած 20 օրացուցային օրվա ընթացքում
14	42121570/11	Առանձգակալ		8K12 մետաղական առանձգակալ, ԳOUS 8338-75	հատ	25000	750000	30	ք/ Երևան, Շիրազի 4		Ֆինանսական միջոցներ նախատեսվելուց հետո կողմերի միջև կնքված Համաձայնագիրն ուժի մեջ մտնլուց սկսած 20 օրացուցային օրվա ընթացքում
15	42121570/12	Ներծծման կափարիչ		3K6 պոմպի ներծծման թուջե կափարիչ Մուտքի տրամագիծ- 80մմ	հատ	65000	195000	3	ք/ Երևան, Շիրազի 4		Ֆինանսական միջոցներ նախատեսվելուց հետո կողմերի միջև կնքված Համաձայնագիրն ուժի մեջ մտնլուց սկսած 20 օրացուցային օրվա ընթացքում
16	42121570/13	Խխունջ		3k6 պոմպի թուջե խխունջ (պարուրակաձև) , ելքի տրամագիծ- 50մմ	հատ	80000	160000	2	ք/ Երևան, Շիրազի 4		Ֆինանսական միջոցներ նախատեսվելուց հետո կողմերի միջև կնքված Համաձայնագիրն ուժի մեջ մտնլուց սկսած 20 օրացուցային օրվա ընթացքում

17	42121570/14	Սնամեջ գլանի տակդիր տափօղակ		3k6 պոմպի վտուլկի տակի տափօղակ	հատ	40000	320000	8	ք/ Երևան, Շիրազի 4		Ֆինանսական միջոցներ նախատեսվելուց հետո կողմերի միջև կնքված Համաձայնագիրն ուժի մեջ մտնլուց սկսած 20 օրացուցային օրվա ընթացքում
18	42121570/15	Թափանիվ		Թուջե թափանիվ 3k6 պոմպի,տրամագիծը 200մմ	հատ	75000	150000	2	ք/ Երևան, Շիրազի 4		Ֆինանսական միջոցներ նախատեսվելուց հետո կողմերի միջև կնքված Համաձայնագիրն ուժի մեջ մտնլուց սկսած 20 օրացուցային օրվա ընթացքում
19	42121570/16	Մանեկ		Թուջե մանեկ 3k6 պոմպի, ձախ պարուրակով	հատ	10000	150000	15	ք/ Երևան, Շիրազի 4		Ֆինանսական միջոցներ նախատեսվելուց հետո կողմերի միջև կնքված Համաձայնագիրն ուժի մեջ մտնլուց սկսած 20 օրացուցային օրվա ընթացքում
20	42121570/17	Պարան		3k6 պոմպի սալնիկի նաբիֆկայի յուղոտ պարան,12մմ	հատ	5000	100000	20	ք/ Երևան, Շիրազի 4		Ֆինանսական միջոցներ նախատեսվելուց հետո կողմերի միջև կնքված Համաձայնագիրն ուժի մեջ մտնլուց սկսած 20 օրացուցային օրվա ընթացքում

21	42121570/18	Սնամեջ գլան (վտուլկի)		Թուջե սնամեջ գլան 3k6 պոմպի	հատ	25000	125000	5	ք/ Երևան, Շիրազի 4		Ֆինանսական միջոցներ նախատեսվելուց հետո կողմերի միջև կնքված Համաձայնագիրն ուժի մեջ մտնլուց սկսած 20 օրացուցային օրվա ընթացքում
22	42121570/19	Սալնիկի կոամբուքս		3k6 պոմպի թուջե սալնիկի կոամբուքս	հատ	25000	125000	5	ք/ Երևան, Շիրազի 4		Ֆինանսական միջոցներ նախատեսվելուց հետո կողմերի միջև կնքված Համաձայնագիրն ուժի մեջ մտնլուց սկսած 20 օրացուցային օրվա ընթացքում
23	42121570/20	Վալ		3k6 պոմպի մետաղական վալ,40(Խա)	հատ	40000	200000	5	ք/ Երևան, Շիրազի 4		Ֆինանսական միջոցներ նախատեսվելուց հետո կողմերի միջև կնքված Համաձայնագիրն ուժի մեջ մտնլուց սկսած 20 օրացուցային օրվա ընթացքում
24	42121570/21	Կռանշտեյն (բռա)		3k6 պոմպի թուջե կռանշտեյն	հատ	75000	150000	2	ք/ Երևան, Շիրազի 4		Ֆինանսական միջոցներ նախատեսվելուց հետո կողմերի միջև կնքված Համաձայնագիրն ուժի մեջ մտնլուց սկսած 20 օրացուցային օրվա ընթացքում

25	42121570/22	Առանձկակալ		3K6 պոմպի մետաղական առանձգակալ,N-6309 ԳOUS 8338-75	հատ	15000	225000	15	ք/ Երևան, Շիրազի 4		Ֆինանսական միջոցներ նախատեսվելուց հետո կողմերի միջև կնքված Համաձայնագիրն ուժի մեջ մտնլուց սկսած 20 օրացուցային օրվա ընթացքում
26	42121570/23	Ներծծման կափարիչ		4k պոմպի ներծծման կափարիչ, թուջե	հատ	50000	150000	3	ք/ Երևան, Շիրազի 4		Ֆինանսական միջոցներ նախատեսվելուց հետո կողմերի միջև կնքված Համաձայնագիրն ուժի մեջ մտնլուց սկսած 20 օրացուցային օրվա ընթացքում
27	42121570/24	Խխունջ		4k պոմպի խխունջ (պարուրաձև) ,թուջե	հատ	80000	240000	3	ք/ Երևան, Շիրազի 4		Ֆինանսական միջոցներ նախատեսվելուց հետո կողմերի միջև կնքված Համաձայնագիրն ուժի մեջ մտնլուց սկսած 20 օրացուցային օրվա ընթացքում
28	42121570/25	Սնամեջ գլանի տակդիրի տափօղակ		4k պոմպի վտուլկի տակդիրի երկաթե տափօղակ	հատ	7000	70000	10	ք/ Երևան, Շիրազի 4		Ֆինանսական միջոցներ նախատեսվելուց հետո կողմերի միջև կնքված Համաձայնագիրն ուժի մեջ մտնլուց սկսած 20 օրացուցային օրվա ընթացքում

29	42121570/26	Թափանիվ		Թուջե թափանիվ 4k պոմպի	հատ	120000	360000	3	ք/ Երևան, Շիրազի 4		Ֆինանսական միջոցներ նախատեսվելուց հետո կողմերի միջև կնքված Համաձայնագիրն ուժի մեջ մտնլուց սկսած 20 օրացուցային օրվա ընթացքում
30	42121570/27	Մանեկ		Թուջե մանեկ 4k պոմպի	հատ	20000	300000	15	ք/ Երևան, Շիրազի 4		Ֆինանսական միջոցներ նախատեսվելուց հետո կողմերի միջև կնքված Համաձայնագիրն ուժի մեջ մտնլուց սկսած 20 օրացուցային օրվա ընթացքում
31	42121570/28	Նաբիֆկայի պարան		4K պոմպի սալնիկի նաբիֆկայի յուղոտ պարան	հատ	5000	75000	15	ք/ Երևան, Շիրազի 4		Ֆինանսական միջոցներ նախատեսվելուց հետո կողմերի միջև կնքված Համաձայնագիրն ուժի մեջ մտնլուց սկսած 20 օրացուցային օրվա ընթացքում
32	42121570/29	Սնամեջ գլան (վտուլկի)		Թուջե սնամեջ գլան 4k պոմպի	հատ	30000	150000	5	ք/ Երևան, Շիրազի 4		Ֆինանսական միջոցներ նախատեսվելուց հետո կողմերի միջև կնքված Համաձայնագիրն ուժի մեջ մտնլուց սկսած 20 օրացուցային օրվա ընթացքում

33	42121570/30	Սալնիկի կոմբուքս		4k պոմպի թուջե սալնիկի կոմբուքս	հատ	25000	125000	5	ք/ Երևան, Շիրազի 4		Ֆինանսական միջոցներ նախատեսվելուց հետո կողմերի միջև կնքված Համաձայնագիրն ուժի մեջ մտնլուց սկսած 20 օրացուցային օրվա ընթացքում
34	42121570/31	Վալ		4k պոմպի մետաղական վալ(40խա)	հատ	60000	240000	4	ք/ Երևան, Շիրազի 4		Ֆինանսական միջոցներ նախատեսվելուց հետո կողմերի միջև կնքված Համաձայնագիրն ուժի մեջ մտնլուց սկսած 20 օրացուցային օրվա ընթացքում
35	42121570/32	Կռանշտեյն		4k պոմպի թուջե կռանշտեյն	հատ	100000	200000	2	ք/ Երևան, Շիրազի 4		Ֆինանսական միջոցներ նախատեսվելուց հետո կողմերի միջև կնքված Համաձայնագիրն ուժի մեջ մտնլուց սկսած 20 օրացուցային օրվա ընթացքում
36	42121570/33	Առանձկակալ		4k պոմպի մետաղական առանձգակալ ,N-6308 ԳՕՍՏ 8338-75	հատ	12000	360000	30	ք/ Երևան, Շիրազի 4		Ֆինանսական միջոցներ նախատեսվելուց հետո կողմերի միջև կնքված Համաձայնագիրն ուժի մեջ մտնլուց սկսած 20 օրացուցային օրվա ընթացքում

37	42121570/34	Առանձկակալ		4k պոմպի մետաղական առանձգակալ ,N-6309 ԳOUS 8338-75	հատ	14000	420000	30	ք/ Երևան, Շիրազի 4		Ֆինանսական միջոցներ նախատեսվելուց հետո կողմերի միջև կնքված Համաձայնագիրն ուժի մեջ մտնլուց սկսած 20 օրացուցային օրվա ընթացքում
38	42121570/35	Պոմպի առանձգակալ		KM պոմպի մետաղական առանձգակալ,N-3610, ԳOUS 8338-75	հատ	35000	1050000	30	ք/ Երևան, Շիրազի 4		Ֆինանսական միջոցներ նախատեսվելուց հետո կողմերի միջև կնքված Համաձայնագիրն ուժի մեջ մտնլուց սկսած 20 օրացուցային օրվա ընթացքում
39	42121570/36	Պոմպի առանձգակալ		KM պոմպի մետաղական առանձգակալ,N-3612,	հատ	46000	1380000	30	ք/ Երևան, Շիրազի 4		Ֆինանսական միջոցներ նախատեսվելուց հետո կողմերի միջև կնքված Համաձայնագիրն ուժի մեջ մտնլուց սկսած 20 օրացուցային օրվա ընթացքում
40	42121570/37	Կմախք		KM պոմպի թուջե կմախք	հատ	50000	150000	3	ք/ Երևան, Շիրազի 4		Ֆինանսական միջոցներ նախատեսվելուց հետո կողմերի միջև կնքված Համաձայնագիրն ուժի մեջ մտնլուց սկսած 20 օրացուցային օրվա ընթացքում

41	42121570/38	Մանեկ		Թուջե մանեկ ԿՄ պոմպի	հատ	15000	225000	15	ք/ Երևան, Շիրազի 4		Ֆինանսական միջոցներ նախատեսվելուց հետո կողմերի միջև կնքված Համաձայնագիրն ուժի մեջ մտնլուց սկսած 20 օրացուցային օրվա ընթացքում
42	42121570/39	Անիվ		Թուջե անիվ ԿՄ պոմպի	հատ	85000	170000	2	ք/ Երևան, Շիրազի 4		Ֆինանսական միջոցներ նախատեսվելուց հետո կողմերի միջև կնքված Համաձայնագիրն ուժի մեջ մտնլուց սկսած 20 օրացուցային օրվա ընթացքում
43	42121570/40	Հերմետիկացմա ն օղակ		Թուջե օղակ ԿՄ պոմպի	հատ	12000	60000	5	ք/ Երևան, Շիրազի 4		Ֆինանսական միջոցներ նախատեսվելուց հետո կողմերի միջև կնքված Համաձայնագիրն ուժի մեջ մտնլուց սկսած 20 օրացուցային օրվա ընթացքում
44	42121570/41	Կմախքի կափարիչ		Թուջե կմախքի կափարիչ ԿՄ պոմպի	հատ	60000	180000	3	ք/ Երևան, Շիրազի 4		Ֆինանսական միջոցներ նախատեսվելուց հետո կողմերի միջև կնքված Համաձայնագիրն ուժի մեջ մտնլուց սկսած 20 օրացուցային օրվա ընթացքում

45	42121570/42	Նաբիֆկայի սալնիկ		Նաբիֆկայի սալնիկի յուղոտ պարան КМ պոմպի,12մմ	հատ	5000	150000	30	ք/ Երևան, Շիրազի 4		Ֆինանսական միջոցներ նախատեսվելուց հետո կողմերի միջև կնքված Համաձայնագիրն ուժի մեջ մտնլուց սկսած 20 օրացուցային օրվա ընթացքում
46	42121570/43	Գլան		Թուջե սնամեջ գլան КМ պոմպի	հատ	25000	75000	3	ք/ Երևան, Շիրազի 4		Ֆինանսական միջոցներ նախատեսվելուց հետո կողմերի միջև կնքված Համաձայնագիրն ուժի մեջ մտնլուց սկսած 20 օրացուցային օրվա ընթացքում
47	42121570/44	Կրանբուկսի օղակ		Կրանբուկսի թուջե օղակ КМ պոմպի	հատ	25000	100000	4	ք/ Երևան, Շիրազի 4		Ֆինանսական միջոցներ նախատեսվելուց հետո կողմերի միջև կնքված Համաձայնագիրն ուժի մեջ մտնլուց սկսած 20 օրացուցային օրվա ընթացքում
48	42121570/45	Կափարիչ սալնիկ		*Թուջե կափարիչ սալնիկ КМ պոմպի*	հատ	65000	260000	4	ք/ Երևան, Շիրազի 4		Ֆինանսական միջոցներ նախատեսվելուց հետո կողմերի միջև կնքված Համաձայնագիրն ուժի մեջ մտնլուց սկսած 20 օրացուցային օրվա ընթացքում

49	42121570/46	Անցումային տափօղակ		Թուջե տափօղակ անցումային ԿՄ պոմպի	հատ	15000	45000	3	ք/ Երևան, Շիրազի 4		Ֆինանսական միջոցներ նախատեսվելուց հետո կողմերի միջև կնքված Համաձայնագիրն ուժի մեջ մտնլուց սկսած 20 օրացուցային օրվա ընթացքում
50	42121570/47	Շարժիչ		Շարժիչ ԿՄ պոմպի 15կվտ, առնվազն 2900պտ/ր	հատ	290000	1160000	4	ք/ Երևան, Շիրազի 4		Ֆինանսական միջոցներ նախատեսվելուց հետո կողմերի միջև կնքված Համաձայնագիրն ուժի մեջ մտնլուց սկսած 20 օրացուցային օրվա ընթացքում
51	42121570/48	Շարժիչ		Շարժիչ ԿՄ պոմպի,22կվտ,առնվազն 2900պտ/ր	հատ	362500	1450000	4	ք/ Երևան, Շիրազի 4		Ֆինանսական միջոցներ նախատեսվելուց հետո կողմերի միջև կնքված Համաձայնագիրն ուժի մեջ մտնլուց սկսած 20 օրացուցային օրվա ընթացքում
52	42121150/4	Պոմպ և շարժիչ կոմպլեկտ		Մետաղական,Ներծծման առավելագույն բարձրություն-5մետր, Հիդրավլիկ մատուցում-Q-38մ3/ժ, H-բարձրություն՝ նվազագույնը-110մ, Պտույտների հաճախականություն՝ նվազագույնը-	հատ	1000000	1000000	1	ք/ Երևան, Շիրազի 4		Ֆինանսական միջոցներ նախատեսվելուց հետո կողմերի միջև կնքված Համաձայնագիրն ուժի մեջ մտնլուց սկսած 20 օրացուցային օրվա ընթացքում

				3000պտ/ր, Շարժիչի հզորություն-30ԿՎտ Թույլատրելի կավիտացիան-4.5							
53	42121570/49	Պոմպի առանձգակալ		Մետաղական առանձգակալ ,N-1608, 2 շարքով ինքնատեղադրվող ԳOUS 520-2002		35000	700000	20	ք/ Երևան, Շիրազի 4		Ֆինանսական միջոցներ նախատեսվելուց հետո կողմերի միջև կնքված Համաձայնագիրն ուժի մեջ մտնլուց սկսած 20 օրացուցային օրվա ընթացքում
54	42121150/5	Պոմպ		Q1000 լ/ր, 11 կվտ, 2930պտ/ր, Hmin-37մ	հատ	333333.33 3	1000000	3	ք/ Երևան, Շիրազի 4		Ֆինանսական միջոցներ նախատեսվելուց հետո կողմերի միջև կնքված Համաձայնագիրն ուժի մեջ մտնլուց սկսած 20 օրացուցային օրվա ընթացքում
55	42121150/6	Պոմպ		ԼՀՀ 38-220 շարժիչի հզորությունը՝ 45 կվտ, 2900պտ/ր	հատ	1600000	4800000	3	ք/ Երևան, Շիրազի 4		Ֆինանսական միջոցներ նախատեսվելուց հետո կողմերի միջև կնքված Համաձայնագիրն ուժի մեջ մտնլուց սկսած 20 օրացուցային օրվա ընթացքում
56	42121570/50	Ներծծման շլանգ		Ռետինե ճկուն խողովակ երկաթե պարույրով ամրացված, վակումային ՊՎՀ-շլանգ, ներսի չափը՝	մետր	15000	900000	60	ք/ Երևան, Շիրազի 4		Ֆինանսական միջոցներ նախատեսվելուց հետո կողմերի միջև կնքված Համաձայնագիրն

				102մմ, դրսի չափը՝ 117մմ:							ուժի մեջ մտնլուց սկսած 20 օրացուցային օրվա ընթացքում
57	42121570/51	Ներծծման շլանգ		Ռետինե ճկուն խողովակ երկաթե պարույրով ամրացված, վակումային ՊՎՀ-շլանգ, ներսի չափը՝ 120մմ, դրսի չափը՝ 135,4մմ:	մետր	30000	1800000	60	ք/ Երևան, Շիրազի 4		Ֆինանսական միջոցներ նախատեսվելուց հետո կողմերի միջև կնքված Համաձայնագիրն ուժի մեջ մտնլուց սկսած 20 օրացուցային օրվա ընթացքում
58	42121570/52	Վտուլկի ռեզին		Ռետինե լար d 14.0 մմ TMKShch, ԳՕՍ 6467-79 (կլոր տրամագծով)	կգ	8000	320000	40	ք/ Երևան, Շիրազի 4		Ֆինանսական միջոցներ նախատեսվելուց հետո կողմերի միջև կնքված Համաձայնագիրն ուժի մեջ մտնլուց սկսած 20 օրացուցային օրվա ընթացքում
59	42121570/53	Վտուլկի ռեզին		Ռետինե լար d 12.0 մմ TMKShch, ԳՕՍ 6467-79 (կլոր տրամագծով)	կգ	8000	400000	50	ք/ Երևան, Շիրազի 4		Ֆինանսական միջոցներ նախատեսվելուց հետո կողմերի միջև կնքված Համաձայնագիրն ուժի մեջ մտնլուց սկսած 20 օրացուցային օրվա ընթացքում
60	42121570/54	Վտուլկի ռեզին		Ռետինե լար d 10.0 մմ TMKShch, ԳՕՍ 6467-79 (կլոր տրամագծով)	կգ	8000	400000	50	ք/ Երևան, Շիրազի 4		Ֆինանսական միջոցներ նախատեսվելուց հետո կողմերի միջև կնքված Համաձայնագիրն ուժի մեջ մտնլուց

											սկսած 20 օրացուցային օրվա ընթացքում
61	42121570/55	Հակադարձ կափույր		Երկաթյա F100մմ նախատեսված ոռոգման պոմպերի և ջրագծերի համար, երկու կցաշուրթերի ներտարածքում տեղադրվող հակադարձ կափույր	հատ	20000	400000	20	ք/ Երևան, Շիրազի 4		Ֆինանսական միջոցներ նախատեսվելուց հետո կողմերի միջև կնքված Համաձայնագիրն ուժի մեջ մտնլուց սկսած 20 օրացուցային օրվա ընթացքում
62	42121570/59	Երկաթե քաշիչ		Երկաթե քաշիչ - 200մմ չափսի,պարուրակով, երեք բռնակներով	հատ	25000	75000	3	ք/ Երևան, Շիրազի 4		Ֆինանսական միջոցներ նախատեսվելուց հետո կողմերի միջև կնքված Համաձայնագիրն ուժի մեջ մտնլուց սկսած 20 օրացուցային օրվա ընթացքում
63	42121570/60	Խռապավիկ		Երկաթե հակադարձ կափույրով 80մմ, թուջե СЧ15, ցանցը-մետաղ 3,քաշը-8կ	հատ	2500	75000	30	ք/ Երևան, Շիրազի 4		Ֆինանսական միջոցներ նախատեսվելուց հետո կողմերի միջև կնքված Համաձայնագիրն ուժի մեջ մտնլուց սկսած 20 օրացուցային օրվա ընթացքում
64	42121570/61	Խռապավիկ		Երկաթե հակադարձ կափույրով 100մմ, թուջե СЧ15, ցանցը-մետաղ 3, քաշը-+-11կգ	հատ	35000	1050000	30	ք/ Երևան, Շիրազի 4		Ֆինանսական միջոցներ նախատեսվելուց հետո կողմերի միջև կնքված Համաձայնագիրն ուժի մեջ մտնլուց սկսած 20

											օրացուցային օրվա ընթացքում
65	42121570/62	Փական		(Butterfly), փեղկը – սկավառակային, PN՝ ամենաքիչը 6 բար, չուգունե կամ չժանգոտվող պողպատյա, DN100	հատ	12000	360000	30	ք/ Երևան, Շիրազի 4		Ֆինանսական միջոցներ նախատեսվելուց հետո կողմերի միջև կնքված Համաձայնագիրն ուժի մեջ մտնելուց սկսած 20 օրացուցային օրվա ընթացքում
66	42121570/63	Փական		(Butterfly), փեղկը – սկավառակային, PN՝ ամենաքիչը 6 բար, չուգունե կամ չժանգոտվող պողպատյա, DN150	հատ	25000	750000	30	ք/ Երևան, Շիրազի 4		Ֆինանսական միջոցներ նախատեսվելուց հետո կողմերի միջև կնքված Համաձայնագիրն ուժի մեջ մտնելուց սկսած 20 օրացուցային օրվա ընթացքում
67	42121570/56	Հակադարձ կափույր		Երկաթյա F50մմ նախատեսված ոռոգման պոմպերի և ջրագծերի համար	հատ	10000	100000	10	ք/ Երևան, Շիրազի 4		Ֆինանսական միջոցներ նախատեսվելուց հետո կողմերի միջև կնքված Համաձայնագիրն ուժի մեջ մտնելուց սկսած 20 օրացուցային օրվա ընթացքում
68	42121570/57	Հակադարձ կափույր		Երկաթյա F65մմ նախատեսված ոռոգման պոմպերի և ջրագծերի համար	հատ	14000	140000	10	ք/ Երևան, Շիրազի 4		Ֆինանսական միջոցներ նախատեսվելուց հետո կողմերի միջև կնքված Համաձայնագիրն ուժի մեջ մտնելուց սկսած 20

											օրացուցային օրվա ընթացքում
69	42121570/58	Հակադարձ կափույր		Երկաթյա F80մմ նախատեսված ոռոգման պոմպերի և ջրագծերի համար	հատ	18000	180000	10	ք/ Երևան, Շիրազի 4		Ֆինանսական միջոցներ նախատեսվելուց հետո կողմերի միջև կնքված Համաձայնագիրն ուժի մեջ մտնելուց սկսած 20 օրացուցային օրվա ընթացքում

Պոմպերի և շարժիչների համար երաշխիքային ժամկետը սահմանվում է առնվազն 1 տարի:
Ապրանքը պետք է լինի նոր, չօգտագործված և առանց խոտանի: Ապրանքի տեղափոխումը և բեռնաթափումը իրականացնում է Վաճառողը իր միջոցներով և իր հաշվին:
Մատակարարման վերջնաժամկետը չի կարող ավել լինել, քան տվյալ տարվա դեկտեմբերի 25-ը:

ԳՆՈՐԴ
_Կանաչապատում և շրջակա միջավայրի պահպանություն» ՀՈԱԿ
ՀՀ, ք. Երևան, Փ.Բյուզանդի 1/3,
Երևանի քաղաքապետարանի 2-րդ մասնաշենք
Բանկ՝ «Ինեկոբանկ» ՓԲԸ
Հ/Հ՝ 205022563241001
ՀՎՀՀ՝ 02819226
Էլ. Հասցե՝ gnumner.kanach@yerevan.am
Տնօրեն՝

Ա.Աղայան
/ստորագրություն/Կ.Տ

ՎԱՃԱՌՈՂ
«ԷԼԻՏՊՐՈՄ» ՍՊԸ
ՀՀ ք.Երևան, Աթոյան 111/1
Բանկ՝ «Հայէկոնոմբանկ» ԲԲԸ
Էրեբունու մ/ճ
ՀՀ 163068070784
ՀՎՀՀ 00464022
Էլ. Հասցե՝ elitprom1@mail.ru
Տնօրեն՝

Ա.Նիկոյան
/ստորագրություն/Կ.Տ

Հավելված N 3
« » 2021 թ. կնքված
ծածկագրով պայմանագրի

Պայմանագրի կողմ	Պատվիրատու
_____	_____
_____	_____
գտնվելու վայրը _____	գտնվելու վայրը _____
հհ _____	հհ_____
հվհհ _____	հվհհ_____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝

_____

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ « » « » 20 թ. դուրս գրված N ___ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատակարարել է հետևյալ ապրանքները՝

N	Մատակարարված ապրանքների							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ապրանքը հանձնեց	Ապրանքը ընդունեց
_____	_____
ստորագրություն	ստորագրություն
_____	_____
ազգանուն, անուն	ազգանուն, անուն
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված 3.1
« » 2021 թ. կնքված
ծածկագրով պայմանագրի

ԱԿՏ N _____
պայմանագրի արդյունքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ _____-ի (այսուհետ՝ Գնորդ) և _____
Գնորդի անվանումը Վաճառողի անվանումը
(այսուհետ՝ Վաճառող) միջև 20 թ. _____ -ին կնքված N _____
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը
պայմանագրի շրջանակներում Վաճառողը 20 թ. _____-ին հանձնման-ընդունման նպատակով Գնորդին հանձնեց ստորև նշված ապրանքները.

Ապրանքի		
անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

_____
ազգանուն, անուն

_____
Ստորագրություն

Ընդունեց
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն